



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 7

13 ՀՈՒԼԻՍԻ 2023թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 15 անդամներ:

Բացակա էին՝ Անի Գալստյանը, Հովհաննես Գասպարյանը, Սահակ Գյուլինյանը, Սոֆիա Խաչատրյանը, Վարդան Պապյանը, Նարեկ Ստեփանյանը

Քաղաքապետի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Գրիգոր Հալլաբյան, Ստեփան Բադալյան, Խոսրով Թարվերդյան

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Գագիկ Մաթևոսյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Արման Սմբատյանը

Լսեցին

**ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 7 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ԱՐՄԱՆ ՍՄԲԱՏՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներ պահանջներով՝ Նոր Հաճրն համայնքի ավագանին՝ որոշում է.

Հաստատել համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 13-ի թիվ 7 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Նոր Հաճրն համայնքի ղեկավարի հաղորդումը 2023 թվականի բյուջեի 2 -րդ եռամսյակի կատարման մասին:

2. ՀՀ Կոտայքի մարզի Նոր Հաճըն համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին

3. Գրադարակ կրթամշակութային հասարակական կազմակերպությանը կապիտալ դրամաշնորհի հատկացնելու մասի

4. Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28- ի N140-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

5. Նոր Հաճըն համայնքի սեփականություն հանդիսացող գույքի գույքագրման փաստաթղթերում փոփոխություններ կատարելու մասին

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 70-Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2- ԲԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Ղեկավարվելով <Տեղական ինքնակառավարման մասին> օրենքի 38 հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի, պահանջներով՝ Նոր Հաճըն համայնքի ավագանին, լսելով համայնքի 2023 թվականի երկրորդ եռամսյակի բյուջեի կատարման վերաբերյալ հաղորդումը՝ որոշում է.

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը համայնքի 2023 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի (հավելվածը կցվում է):

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 71_Ա/

Լսեցին

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Ձեկ. ԳՐԻԳՈՐ ՀԱԼԼԱԲՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի N656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի պահանջներով, քննարկելով համայնքի ղեկավարի ներկայացրած համայնքի հողային հաշվեշիջը՝ Նոր Հաճրն համայնքի ավագանին որոշում է

1. Հաստատել Նոր Հաճրն համայնքի հողային հաշվեկշիռը՝ համաձայն հավելվածի :
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 72_Ա/

Լսեցին

**ԳՐԱԴԱՐԱԿ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ
ԿԱՊԻՏԱԼ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Ձեկ. ՍՏԵԼԼԱ ԲԱԴԱԼՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և հիմք ընդունելով 2021թ դեկտեմբերի 01-ին Գրադարակի Կրթամշակութային ՀԿ իև Մրգաշենի համայնքապետարանի միջև կնքված պայմանագրի 2.4.10 կետը, ինչպես նաև <<Գրադարակ կրթամշակութային>> ՀԿ տնօրեն և համահիմնադիր Ա.Ջեյնալյանի 2023 թվականի հուլիսի 04-ի գրությունը՝ Նոր Հաճրն համայնքի ավագանին որոշում է.

1. Տալ համաձայնություն Գրադարակ կրթամշակութային ՀԿ-ի և ՅՈՒՆԻՍԵՖ Հայաստանի գրասենյակի համագործակցության արդյունքում Նոր Հաճրն համայնքի Մրգաշեն գյուղում <<Գրադարակ Գրադարան>> ներդրված ծրագիրը ավարտին հասցնելու նպատակով համայնքի բյուջեից հատկացնել կապիտալ դրամաշնորհ 8 449 359 ՀՀ դրամի չափով, որը կազմակերպությունը պետք է օգտագործի պայմանագրով նշված աշխատանքները իրականացնելու համար:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 73_Ա/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 140-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» 33-րդ հոդվածի առաջին մասով, 34-րդ հոդվածի առաջին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, « Բյուջետային համակարգի մասին» օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, համայնքի ավագանին որոշում է.

1. Նոր Հաճըն համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Նոր Հաճըն համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 140-

Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն հավելվածի:

2. Որոշմամբ հաստատված NN 2, 3 և 6 հավելվածներում կատարել համապատասխան փոփոխությունները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 74-Ն/

Լսեցին

ՆՈՐ ՀԱՃՐՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջներով Նոր Հաճըն համայնքի ավագանին որոշում է.

Նոր Հաճըն համայնքի սեփականություն հանդիսացող գույքագրման փաստաթղթերում կատարել փոփոխություններ՝ համաձայն 1-3 հավելվածների (հավելվածները կցվում են):

Կողմ-15 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 75_Ա/

Ավագանու անդամներ

ՌՈՄԱՆ ԱՎԴԱԼՅԱՆ

[Handwritten signature]

ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

[Handwritten signature]

ՀԱՍՄԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

[Handwritten signature]

ԽԱԶԱՏՈՒՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

[Handwritten signature]

ԱՐՏՅՈՄ ԳԵՎՈՐԳՅԱՆ

[Handwritten signature]

ԱՐԿԱԴԻ ԹՈՐՈՍՅԱՆ

[Handwritten signature]

ԱՆԻ ԻՍՊԻՐՅԱՆ

[Handwritten signature]

ԹՈՎՄԱՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

[Handwritten signature]

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

[Handwritten signature]

ԷՄՄԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

[Handwritten signature]

ԳՈՌ ՄԵԾՈՅԱՆ

[Handwritten signature]

ԳԵՂԱՄ ՄԽԻԹԱՐՅԱՆ

[Handwritten signature]

ԱՆՆԱ ՄՈՒՐԱԴՅԱՆ

[Handwritten signature]

ՆԵՐՍԵՍ ՊԵՏՐՈՍՅԱՆ

[Handwritten signature]

ՆԱՐԻՆԵ ՕՋՆԵՑՅԱՆ

[Handwritten signature]

Համայնքի ղեկավար

ԳԱԳԻԿ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

[Handwritten signature]



Նիսպոն արձանագրեց՝ Արման Սմբատյանը
